Իսկ զՀրովարտակն որ տուաւ երկուց ազգաց յառաջին դատին յաւուրս Էմին Պէյի, գրեալ 'ի Թուին Հիճրէթի ՌՄԼԵ, յետս պահանջեցին 'ի Դրանէ. Հայք ունելով զայն առ ինքեանս, ետուն անմիջապէս, իսկ Յոյնք զպատճէնն միայն. զի իսկն յԵրուսաղէմ առաքեցաք ասէին, որոյ վասն տուաւ հրովարտակ մի եւս Խօճաքեանին առնուլ զայն 'ի ձեռաց Յունաց, եւ ջնջել զարձանագրութիւնս նորին 'ի դատարանաց Երուսաղէմի, Դամասկոսի և այլ տեղեաց, և թողուլ անգործադրելի եւ խափանեալ, որպէս արարեալ էին 'ի Կոստանդինուպոլիս։

Գործակալք վասն ծախուց ճանապարհի ազգ արարին Հայոց և Յունաց՝ ժողովիլ ետուն Զէքի Էֆէնտեայ, եւ տնօրինել զայն 'ի միասին. սակայն Յոյնք ոչ ետուն հաճութիւն վասն գնալոյ նոցա յԵրուսաղէմ, ուստի գործակալք գրով ծանուցին 'ի Դուռն վասն ծախուց, և 'ի ձեռն Թարգմանին (տիվան թէրճիմանի) ազգ արարին Հայոց տալ նոցա 12,500 դահեկան. նոյնչափ եւս Յոյնք, այլ նոքա հեստեցին եւ ոչ բնաւ ճանաչել կամէին զմոպաշէրն և զայլսն։ Եւ 'ի հարցանել նոցա Նուրի Էֆէնտեայ, թէ՞ոյք ոմանք ունին գնալ ընդ մեզ յԵրուսաղէմ. ետուն պատասխանի, ոչ ոք, զի ունիմք ասեն անդ զարս՝ որք կարող են խօսիլ ընդ ձեզ։ Սակայն Թէոդորոս Պատրիարք եւ գործակալ Եպիսկոպոսունք թախանձէին զգլխաւորս ազգին, առաքել ընդ հրովարտակին զՊօղոս և զԻոնէսիոս վարդապետս և զՍմանս 'ի գլխաւորաց ազգին, զի մի ինչ դժուարութիւն ելցէ ընդ առաջ գործոյն 'ի ներդութենէ Յունաց և յայլազգեաց տեղւոյն. քննել և խմանալ նաեւ զել և զմուտ Աթոռոյն և զգործս բռնաւորաց, ապա ըստ այնմ փոյթ տանել թեթեւութեան պարտուց և աղատութեան Աթոռոյն. զի մի յետոյ զրպարտութիւնս ինչ կըրեսցեն կառավարիչքն։ Այսոքիկ բանք կարի պատշաճ թուեցան առաջի Ամիրայից, այլ ոչ ոք 'ի նոցանէ յանձն առ երթալ յԵրուսաղէմ, պատճառելով իւրաքանչիւր ոք զգործս իւր. որոշեցին զՍտեփաննոս Եպիսկոպոս՝ եկեալ 'ի Նուիրակութենէ Կարնոյ՝ եւ զԻոնէսիոս վարդապետ Դարթաւցի, որ եկաց անդ 'ի մայրաքաղաքին ամս իբրեւ 4, վաստակեալ ընդ այլոց 'ի գործս Աթոռոյն, և գտեալ